ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-141-20.05.2019-ԱՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 829 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-141-20.05.2019-ԱՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունելի է համարում նախագծով առաջարկվող դրույթները, միևնույն ժամանակ առաջարկում է քննարկել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում և ենթակա մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու պահանջի նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով, որ դիվանագիտական ներկայացուցչության մարմիններում աշխատանքների համակարգում ենթադրող մի շարք պատասխանատու պաշտոններ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն չեն հանդիսանում ղեկավար պաշտոն (օրինակ՝ նախարարի խորհրդական, վարչության խորհրդական, մամուլի քարտուղար, ինչպես նաև պետական այլ մարմիններ գործուղված դիվանագետների զբաղեցրած հայեցողական պաշտոններ):

Առաջարկում ենք օրինագծի 1-ին հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով պահանջվող դիվանագիտական ծառայության առնվազն 15-ամյա ստաժի փոխարեն սահմանել առնվազն 10-նամյա ստաժ: Մասնավորապես, արտաքին մրցույթով նշանակումների դեպքում և համակարգը երիտասարդ մասնագետներով համալրելու պարագայում 15-ամյա ստաժը բավականին երկար ժամկետ է, և 10-ամյա ժամկետ սահմանելով կարելի է հնարավորինս համակարգը դարձնել ավելի ճկուն, ինչպես նաև սա կլինի մոտիվացիոն հանգամանք նոր կադրերով համալրելու համար:

Նույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով առաջարկվող 15 տոկոսի շեմը սահմանել 20 տոկոս:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցրած անձանց շրջանակից ներկայացված՝ դիվանագիտական մարմնի ղեկավարի թեկնածուի համար պահանջվում է թե մասնագիտական որակավորումներ (պարտադիր պետք է լինի դիվանագետ) և թե երկարամյա փորձ (15 տարվա դիվանագիտական ստաժ), ապա արդյո՞ք

իրավաչափ է, որ քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված անձանց նշանակման համար որևէ չափորոշիչներ չեն սահմանվում՝ ոչ աշխատանքային փորձի և ոչ մասնագիտացման:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրինագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով ներկայացնում է հետևյալ նկատառումները՝

Օրինագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով գործող օրենքի 14-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասի վերաբերյալ հայտնում ենք, որ առաջարկվող դրույթի ամրագրումն արգելափակ-ված է սահմանադրի կողմից:

Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ Հայաս-տանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Հայաս-տանի Հանրապետության Սահմանադրությամբ, իսկ գործունեությունը կարգավորվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով: Այս կանոնը վերաբերում է ինչպես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին ընդհանրապես, այնպես էլ այդ կոլեգիալ մարմնի կազմում ներառված մշտական հանձնաժողովներին մասնավորապես և առանցքային նշանակություն ունի հատկապես այն տեսանկյունից, որ զսպող մեխանիզմ է առ այն, որ օրենսդիրն իր հայեցողությամբ լրացուցիչ իրավասություններ չվերապահի ինքն իրեն:

Մինչդեռ, ներկայացված նախագծով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը, ըստ էության, օժտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ չնախատեսված հավելյալ իրավազորությամբ: Հարկ է ընդգծել, որ սահմանադրականության խնդիրը չի հաղթահարվում անգամ «կարող է» ձևակերպման պայմաններում, քանի որ որևէ պետական մարմնի կողմից որևէ գործողության կատարումը, թեկուզև հայեցողական բնույթի, միևնույն է կոնկրետ լիազո-րության գործադրում է, պարզապես հայեցողական լիազորության, այլ ոչ թե՝ պարտադիր:

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության նախագահին դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակելու առաջարկություն ներկայացնելը, կրկին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ուժով, Հայաստանի Հանրապետության վարչապետի բացառիկ լիազորությունն է: Իսկ թե համապատասխան առաջարկության ներկայացմանը նախորդող ինչ գործընթաց կիրականացնի վարչապետը, դա վերջինիս բացարձակ հայեցողությունն է և այդ հայեցողության շրջանակները որևէ մարմնի, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից, որևէ կերպ չեն կարող կանխորոշվել կամ նեղացվել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է նախագիծը վերանայել այն հաշվով, որպեսզի բացառվեն սահմանադրական կարգավորումների հետ անհամատեղելի լուծումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

27 հունիսի 2019 թվականի N 829 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Գրիգոր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-141-20.05.2019-ԱՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հունիսի 27
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-141-20.05.2019-ԱՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-249 օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Դիվանագիտական ներկայացուցչին վարչապետի առաջարկությամբ նշանակում և հետ է կանչում Հանրապետության նախագահը՝

1) դիվանագիտական ծառայության առնվազն 15-ամյա ստաժ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցրած անձանց շրջանակից.

2) արտաքին քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված՝ այլ անձանց շրջանակից՝ պայմանով, որ նման նշանակումների արդյունքում այս կատեգորիայի անձանց շրջանակից նշանակվածների ընդհանուր թիվը չի գերազանցում դիվանագիտական ներկայացուցիչների ընդհանուր թվի 15 տոկոսը:»:

2. Նույն հոդվածը լրացնել նոր 1.1-ին մասով՝

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված անձանց նշանակման առաջարկը Հանրապետության նախագահին ներկայացնելուց առաջ վարչապետը կարող է իր առաջարկած անձի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով, որը կարող է ներկայացնել թեկանծուի վերաբերյալ խորհրդակցական եզրակացություն: Եզրակացությունը կցվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթերի փաթեթին:»:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

2015 թվականից Հայաստանի Հանրապետությունը անցում է կատարել խորհրդարանական կառավարման համակարգի, ինչը ենթադրում է խորհրդարանին ավելի բարձր լիազորությունների վերապահում՝ նպատակ ունենալով ապահովել գործադիրի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն, թափանցիկություն, ինչպես նաև հաշվետվողականություն: Այս ամենով հանդերձ՝ խիստ կարևոր է նաև արտաքին քաղաքականության ոլորտում գործադիրի որակական գործառնականության բարձրացումը՝ որպես արտաքին քաղաքականության ոլորտում ՀՀ շահի խթանման կարևոր գործոն:

Հաշվի առնելով վերջին տարիներին դիվանագիտական ծառայության ոլորտում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոններում հաճախ ոչ հիմնավոր և անարդյունավետ նշանակումների պրակտիկան՝ պայմանավորված քաղաքական և երբեմն նույնիսկ անձնական շահերով, անհրաժեշտ է հարցի կարգավորումը դնել ինստիտուցիոնալ հենքի վրա՝ հետագայում քաղաքական վերադասավորումների ցանկացած պարագայում նմանատիպ պրակտիկայի բացառման համար:

Այս հանգամանքից ելնելով՝ վերոնշյալ փոփոխության նախագիծը լուծումներ է առաջարկում մի քանի հիմնական հնարավոր բացասական պրակտիկաների բացառման և դիվանագիտական ծառայության ոլորտի առողջացմանը նպաստելու համար:

Մասնավորապես՝ օրենքի առաջարկված կարգավորման նախագիծը նվազագույնի է հասցնում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոններում քաղաքական կամ անձնական շահով պայմանավորված նշանակումների հնարավորությունը, ինչը առողջացնում է դիվանագիտական ծառայության ոլորտը՝ ստեղծելով հավասար հնարավորություններ և առողջ մրցակցային մթնոլորտ դիվանագիտական ծառայության ոլորտում համապատասխան մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին տիրապետող դիվանագետների առաջխաղացման համար:

Նաև, սահմանելով 15 տարվա ստաժի պահանջ, օրենսդրական այս կարգավորումը նպաստում է դիվանագիտական ծառայության պատասխանատու պաշտոններում ավելի փորձառու դիվանագետների նշանակմանը՝ որպես երաշխիք ՀՀ արտաքին քաղաքական շահի խթանման համար:

Ի վերջո, առաջարկված փոփոխության նախագիծը գործնական առումով շոշափելի լծակներ է ապահովում արտաքին քաղաքականության ոլորտում խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների իրացման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդարանի վերահսկողության լիազորությունները սահմանված են օրենսդրությամբ, անհրաժեշտ է ապահովել գործնական առումով ավելի արդյունավետ լծակներ վերահսկողության գործիքների կիրառման ապահովման համար: Այս համատեքստում կարևորվում են ինչպես խորհրդարանի, այնպես էլ իրավասու մշտական հանձնաժողովի լիազորությունների հետ կապված համապատասխան օրենսդրական խմբագրումները, որոնք խորհրդարանին հնարավորություն կտան գործնական իմաստով իրականացնել օրենսդրությամբ վերապահված իր լիազորությունները՝ ապահովելով դիվանագիտական ծառայող չհանդիսացող անձանց նշանակման գործընթացի թափանցիկությունը և հավաստելով դրա հիմնավորվածությունը:

Այս համատեքստում անհրաժեշտ է նաև ընդգծել այն հանգամանքը, որ խորհրդարանի վերահսկողության լծակների հզորացումն ամրապնդում է Կառավարության գործունեության հիմնավորվածությունը՝ քաղաքական առումով վերջինիս օժտելով կայունությամբ և ավելի բարձր լեգիտիմությամբ: Դեսպանի կամ միջազգային կառույցում ՀՀ ներկայացուցչի նշանակման առնչությամբ խորհրդարանի վերահսկողական մեխանիզմների կիրառումը նաև բացահայտում է կառավարության կենսունակությունը՝ հիմնավորելու, մեկնաբանելու և անհրաժեշտության դեպքում պատասխանատու լինելու իր գործողություններում լիազորությունների առումով ավելի կենսունակ խորհրդարանի առջև:

Կարևոր է նաև շեշտել, որ այլ անձանց շրջանակից դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնում նշանակումների 15 տոկոս սահմանափակումը վերաբերում է սույն օրենքի ընդունմանը հաջորդող նշանակումներին և օբյեկտիվորեն չի կարող մեկնաբանվել որպես հիմք 15 տոկոսը գերազանցող և ծառայության մեջ գտնվող դիվանագիտական ներկայացուցիչների հետկանչի համար:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ վերոնշյալ փոփոխությունների նախագիծը պետք է դիտարկել ինչպես խորհրդարանի դերի բարձրացման, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտում մասնագիտական գործունեության իրականացման տեսանկյունից՝ ՀՀ արտաքին քաղաքական շահերի խթանմամբ պայմանավորված: